

Հ. ԲՈՒՍԱԲԱՌՈՒԹԻՒՆ

(Տես յ'էջ 417)

175. Ասպուզանուկ.

Անշուշտ Ասպուզանին նման՝ այլ անկէ պզտիկ է. զոր վերոյիշեալ բառից հաւաքողն զուգէ խափիք անուան. ուրիշ մ'ալ երկու անուանքն եւս այլայլելով գրէ, խաբոտ՝ Ասպոնան: Եթէ խափիթ՝ է հաւանօրէն Ղաֆերն, և սա հայերէն Երեսնակն է, (Eupatorium), ինչպէս գրէ Ամիրտ. այլ, բայց անկէ զատ դարձեալ կայ ուրիշ Ղաֆեր մ'այլ, և ասոր համար կ'ըսէ, « Ինքն խոտ մի է, մէկ թիզ է, կէս » տիրեւ է և կէս ծաղիկ, երեք ազգ է. աղէկն ծիրանի ծաղիկ ունի, բնութիւնն » տաք է և շոր է », և այլն:

176. Ասպուր. Ասպուրակ. Ասպուռ. Ասփուր.

Թէ և նոյնանիչ են այսպէս զանազանեալ գրուածքն, բայց մի և նոյն իսկ անուան նշանակութիւնն տարակուսական է. այսինքն Արաբացոց այլ Ասփուր կոչածն և իբր համանիչ Ղրտումն կամ Կրտիմն՝ ինչ տեսակ քոյս է կամ ինչ զանազան տեսակք. մեր բժշկարանք կամ Ամիրտ. հասարակ Ասպուրը չի ստորաւ գրեր՝ այլ Վայրին. երկուքն ալ Ղուրտում անուան տակ, որ է ըստ Ար. Գորբում Բէշ. Պէյթար կ'ըսէ. երկայն թանձր և փշոտ տերեւներով քոյս մի է, երկու կանգուն բարձր, զլուխն մեծ ձիթապտղի մի չափ. ծաղիկն քրքմային, համեմի տեղ ի գործածուի, իսկ սերմն կարմիր և ճերմակ, երկայնաձև և անկիւնաւոր, է: Մեր բժշկապետն գրէ, « Ղրտում, որ է Ասփրին հռչանմ. ածուց լինի և վայրի, և լաւն այն է որ սպիտակ լինի. տաք է և կակուղ... Թէ իր հնդին եղն » ծովու փրփրով ի յաչքն քաշեն՝ զսպիտակն ի յաչացն տանի. և թէ զզլուխն » այնով լուանայ՝ զոլին սպանանէ: Եւ ասացել է, թէ Վայրի Ղուրտումին՝ » (եթէ) մէկ մարդն կարիճ հարեալ լինի՝ ի հետն պահէ, զցաւն խափանէ. և ո յորժամ ձգէ՝ այլվի ցաւի... Ատ Պատ. Թէ Պ. այսոր Հասարաւանայ կ'ասեն »: - Իսկ Վայրի Ասփուրին համար գրէ. « Ղուրտումի պտաի... Վայրի Ղուրտումն » այլ Ասփուր է. բայց տերեւն յերկան կու լինի, և զագսթն կու բուսանի մէկ » մէկ կարմրուկ հատկիներ. և ծաղիկն դեղնուկ կու լինի, և տակն բարկուկ. և » թէ զտերեւն և զգագաթն մանր ծեծեն և պեղպեղով և գինով խմեն, օգտէ » կարճահարին », և այլն: Պէյթարն կ'ըսէ, թէ տերեւներն՝ միայն զագագթան վրայ են, և թէ կանաչք անկէ իլ (իլիկ) կու չինեն. Արաբացի անունն Գորթում՝ Ղրտում, Ղուրտում՝ կամ Կրտիմ՝ ըստ մերոցս, համաձայնի Թ. և Լ. Carthame, Carthamus. Ի. Сафлоръ Красильный. Վայրի Ասփուրն ալ Carthamus latus. Այն տեսակն որ Որափոշ կ'ըսուի, Carthamus Oxyacanthus, ՚ի Միջագետս Երասխայ և Կուրի նշանակած են բուսալինիք. Թերեւս այս տեսակն է զոր Ամիրտ. Տարիդան անուանելով գրէ, « Որ է Վայրի Ղուրտումն. ինքն

» բոյս-մն է որ գարունն կու բուսնի, և իր ծաղիկն նման է Հասակին ծաղկին
» (Suastrus, Tribulus), և դեղին է և բոլոր է, և ծաղիկն փուշ ունի, և ի Հիրազ՝
» Անկուվիզ կու ասեն: — Եոր հայերէն անուն մ'ալ կ'ընծայէ Անգիտաց ան-
» պէտն այս բուսոյ »: Ղուրտում, Հասաքտանայ պարսկերէն, հայերէն Հասկի-
» րակ ասեն, որ է Ասիւրի հունտն »: Ըսւ եւս Հակոբիւրակ, զոր տես:

Վաստակոց գիրքն յիշէ (զլ. 315) զՎայրի Ասփուրն, զինեզործութեան վրայ
խօսելով, զոր և կամ Դաղձ կ'անուանէ կամ ասոր յետ կու յիշէ. « Եթէ ուզես
» որ (գինին) յեռալն չվայթի, առ զԴաղձն կամ զՎայրի Ասփուրն, և կանդի
» (վանդակաձէն) շինես կարասին բերանոյն չաքաք՝ զերջ գտակ, և ի վերայ բե-
» րանայն դիր »: յոյն բնագիրն Καλαμίντης կոչէ զբոյսը, որ է Nepeta, փ. Pou-
liot sauvage, Ռ. Δυκίμ πολεή. Վայրի Դաղձ, — Ոմանք յԵւրոպացի գիտնոց
Duleamara կոչեն զԱսփուրն:

177. * Ասպուրակ.

Որ է Հալիոնն, կ'ըսէ բժշկարան մի, և յոյն կամ լատին բառին տանադար-
ձութիւնն է, Asparagus, որ է հայերէն Երնեքի:

178. * Աստախստոս.

Տ. Արեգախոս (Թ. 3) և Եղնախոսն. Յ. և Լ. Stachys. Այս յոյն անունը
գործածէ և Միս. Հերացի (երես 126):

179. Աստեղած.

Բոյս մի աստեղանման՝ որ գիշերը կու բացուի, ըստ նոր գրողի մի. քննելի է.
այսպէս և հետեւեալքն,

180. Աստղիկ.

Որոյ սոսկ անունը, զրէ, նոյն անձն. նոյնպէս եւ

181. Աստեղունք.

Յիշեալ ի Մշակ օրագրի (ԺԸ, 88):

182. Աստղափուշ.

Ըստ նոր գրողաց՝ երկթզալափ բոյս մի միւրազոյն մեծ տերեւներով, կապոյտ
ծաղկով, զլուխն թաւ դնտաձեւ:

183. Ասրունց.

Յովսափ անուամբ բժշկական բառից և բանից հաւաքող մի՝ զրէ այս անունս,
և կ'ըսէ, Սիլիկոնն է. լատինն Siligo, հասարակ ցորեն կամ ցորենի տեսակ մի
նշանակէ, ըստ յունականին Σιλιγρον.

184. Ատաբոխի.

Անկենաւոր բունով կամ ցօղունով կէս Չօփ բարձրութեամբ բոյս մի, թելա-
ձեւ տերեւներով, վերէն ի վար ծաղկալից և անուշահոտ, ուտելի. ծաղկըներն
հովանաձեւ են և ճերմակ:

185. Ատմատ.

Հնգի բակլայ, գրէ բժշկարան մի:

186. Ատուլ.

Գետնախնձորի (Փաթաթ) նման մանր կոճղէզ է քաղցրահամ ուտելի, և դտուի
ի Կարին և այլ տեղուանք. Շիրակայ կողմերը խանտող կ'անուանեն զայս:

187. * Ատրագոյն.

Լտրեկիան ըստ Պարսից, գրէ Շէհրիմանեանն, և համարի Լ. Flos Adonis, Փ.
Adonide, յանուն Ադոնիս պատանւոյ ըստ առասպելաց, զոր վարազ մի սպանեց,
և Աստղիկ այլափոխեց ի ծաղիկ: Այլ և այլ տեսակք տեսնուած են ի Կարին,
Թարթուս, Բաբերդ, Մանասի (Կիւմիշխանէ) Պարսար, Սպեր, Նախճաւան:

188. Ատրուք ատրաք ?.

Ալոճի պտուղ, ըստ Սերաստացւոց:

189. Արած.

Քարերու և ժայռերու վրայ մաշկի պէս կպած բան մի, դեղին կամ կանաչ,
որ թէ և չի նմանի բուսոց սովորական ձեւին, բայց անոնց նման աճումն և
սերումն ունի. հասարակօրէն Եւրոպացիք Lichen կ'անուանեն. և կան տեսակք
որք դեղի այլ գործածուին ներկելու այլ: Քարերու, պատերու և ճապղած իրոց
երեսն այլ կու պատեն այսպիսի բոյսը, որ մեր լեզուով այլեւայլ անուններ
ունին, և ըստ կարգի յիշուին: Ինչպէս Գորտնբուրդ, Լօռ, Մամուռ, և այլն:

190. Արանդ.

Յ. Բողքոս բառն է Փայիենոսի, Βολβός. Լ. Bulbus, Ռ. Убёточная луковица.
որ է յայտնի բուսոց ոմանց սոխաձեւ տակն կամ կոճղէզն: Պէշվար այլ նոյն
յոյն բառով յիշէ, βολβός. բայց յատկապէս այսպէս կ'անուանէ ուտելի Սոխը,
Պասսալ եգ-գիր, զոր մեր Ամասիացին այլ նշանակէ գրելով « Պասալ ըլ-գիլ, որ
է Պալպուռն »:

191. Արանդուպարանդ. կամ Արիտպարիտ.

Ըստ Պարսից. دڭڭ دڭڭ. « Ինքն դեղ-մն է որպէս սոխ ճգքած, և ինքն ի Սիս »:

» Թանու աշխարհէն կու գայ » . կ'ըսէ մեր բժշկապետն . ուրիշ մ'ալ . « որ է զէտ » երկու սոխ » . Այսպէս գրէ և Պէյթար , և ուրիշ անուն մ'այլ կու տայ , Տօշպոս կամ Տաշապոս , որոյ ստորագրութիւնն ցուցնէ Աջառիթունը կոչուած բոյսը՝ զոր յիշած եմք (Թիւ 8) . Լ. Gladiolus .

192. Արանց Ծաղիկ .

Աւելի պարզ բառով հայերէն կ'ըսուի Թաղք , և ուրիշ անուամբք այլ , զոր գտնես ի կարգին . և է Cyclamen Լ . զոր ստուագործութեամբ գրէ բժշկարանն՝ ըստ յունին , « էփիղամինոն . Արանց Ծաղիկ կամ Լօշ » .

193. Արապէզ .

Ըստ Աերաստացւոյ կամ Բրգնիքցոյ , խոտ մի՝ զոր Լէկիկի Սխտոր ալ կոչեն . Թերեւս պէտք էր ըսել Արազիկ :

194. Արգանդաց Ծաղիկ .

Այսպէս յարմարացեր են նոր գրողք կոչել Լ . Matricaria . ֆ . Matricaire , Տես Մածնի Ծաղիկ :

195. Արդղիկ .

Վայրի բանջար է , ըստ Մանանայի , որ այսչափ միայն գրէ :

196. Արդուխա .

Հին բժշկարանն յիշէ Արդուխայի տակ կամ Արդուխի տակ , զոր նոր բժշկարանք կու մեկնեն՝ Նուարտակ (տես ի կարգին) . կամ Սարքուշա , որ նոյնն է . իսկ Ամիրտ . կ'ըսէ Արդուշ կամ Սարդուշա կոչուի յեզնկա Շէտառէնն , որ է Աեծխոտ , ինչպէս յիշած եմք :

197. Արեան խոտ .

Թարգմանութիւն է արաբերէնին Բիսիմ պէրարի , և Թ . Գան օրու . նոյնպէս Լ . Sanguinaria . ֆ . Sanguinaire . Տես Ոսկէխոտ :

198. Արեգական Ծաղիկ .

Յունական բառի Թարգմանութիւն , որպէս և Լ . Helianthemum . ֆ . Hélianthème , Ռ . Солнецветъ . քիչ օր դիմանալուն համար այսպէս կոչուած համարուի . խոտեղէն բոյս է , մանր ծաղկով , ի ցեղէ Տփաստեակաց (Cistacæ) .

199. Արեգական մայր .

Գեղեցիկ անուն , բայց քիչ մ'այլ պլարանեալ , ըստ Արաքսահանից , ուր և

գրուած է. « Խաղաղար խոտ, զոր Արեգական մայր ասեմն. չորս տերեւ կ'իջնէ,
» ի գետինն կու փռուի խաչանման. տերեւին երկունքն երկու թիգ է, և մէջն
» զէտ ճոթոն է? և յետին փուշեր ունի զէտ ասղան ծայր. և յետեւ տերեւին
» այլ մանտր փիւր կայ. և որձան կակ որպէս վարոց մի և զէտ տանկինակի կոթ.
» և տերեւն խաչանման, և ի ծայրն ծաղիկ ունի կարմրածեւ. և այս խոտս կաթն
» ունի որպէս կարմիր արիւն. . . . Լսեցի թէ ի Մնծրայ լեառն այլ կու բուսնի » : —
Բժշկարան մ'այլ աւելի համառօտ գրէ, կոչելով « Խաղաղար, որ ասի Արեգակն.
» յառաջն չորս տերեւ ի գետինն փռվի. որձայն քան ի վարոց մի. տերեւն խաչ,
» կաթ ունի զէտ սրուն. պատրաստ (կեցիր) որ չցաթկէ կաթն. ուր հասնի՝ խոցէ
» անբժշկելի: Ասեմն, թէ ի Մնծրայ լեառն բուսանի ո: Մնծուր լեռն և Գաւառ՝
կարոյ հարաւակողմն է, Մռզգուր կոչուի յայլազգեաց:

200. Արմինիճ.

Զայս յիշէ Սա. Ռոջեան ի բառագիրսն. « Խոտ է նման Պոպզակի (Գոճամօ-
» բուռաց), ունի վարսս՝ որք ձեռք ճմլեալք զարեան ծուծս հոսեմն ». Ինքն Լ.
անուանէ *Auyrum* կամ *Ascyrum*, որ է տեսակ մի Գոճամօբուռաց. իսկ Սա. Շէհ-
րիման Զագխոսի զուգէ:

201. Արեւադէմ.

Ի բառս Գալիենոսի այս զուգուի Հիդար բառի, կամ լաւ եւս ըստ այլ օրինա-
կոյ՝ Հեղիտրոպոն, որ է հիդ թ. և Լ. բառն *Heliotropium*, որ Արեւադարձ
ըսել է, այսինքն յարեւն դարձող. փ. *Tournevol*, Ռ. *Подсолнечник*. Թ,
Ոյ լիլիկի. ծանօթ րոյս է և աչք առնող իր մեծ անուանման կամ սկաւառակի
նման զիտով, որ և ծաղիկն է, անհամար կուտերով. Ար. կոչուի Սամեր-եւաւմա,
ասորերէնէ առած, ըստ Պէլթարայ. Ամիրա. այլ այս անուան տակ ստորագրէ.
բայց ասով երկու տեսակ բոյսք ճանաչուին, զորս խառն գրէ Պէլթար, մէկն յի-
շեալ մեծ տուռն և ծաղիկն է, միւսն փոքր. և այս է մեր հեղինակին յիշածն, այս-
պէս. « Սամիր եւաւմա, որ Թուրքն Մամպուշ օրի կ'ասէ, և Յադրաս օրի այլ կ'ասէ.
» այս խոտ-մն է որ մէկ տակէն երեք կամ չորս հիւղ կու ելանէ, և ի դազաթն
» ալիտակ ծաղիկ կու լինի, և ի կարմրութիւն կու քլաւէ. զէտ կորու (կարծի)
» աղի կու լինի ծուռ, և տերեւն՝ արեգակն յոր դեհ որ ցայթէն՝ նա յայն դեհն
» կու դառնայ. և ի խոշոր տեղրանք կու բուսնի. և տակն բարակ կու լինի. և
» բժշկունն ի բան չի մտել. . . . Եւ ցեղ մի այլ կու լինի մանր, և ի հանգած ջրե-
» բուն ի մէջն կու բուսնի. և տերեւն բոլոր կու լինի, և միտք կ'ունենայ բոլորեկ
» երեք չորս հատ, զէտ կոթիծնեք, կախման կու լինի » : Կարծիք աղիի նմանու-
թեանն համար յեզրիպտոս՝ կ'ըսէ Պէլթար, կ'անուանեն Հաշիդէր եղ-ազրեպ,
կարճի խոտ:

202. Արեւաբաց.

Թ. Կիլնէշ սեփէն, ըստ նոր գրողի առ մեզ, արեւ ասեմն բացուելուն համար.
բայց ինչ տեսակ կամ ձեւ է, ստուգելու է, նոյնպէս և հետեւեալն.

203. Արեւածագ.

Թ. Կիւնեշ տօղան, Ար. Շամշըդդոյ? ըստ նոյն գրողի:

204. Արեւածաղիկ.

Նոր հնարած բառ է, որով ոմանք Արեւադէմը կ'մանան, ոմանք Արեգական ծաղիկը:

205. Արեւսպաշ.

Այսպէս կոչէ բժշկարան մի Թ. Այ լիւէկի բոյսը, որ է Արեւադէմն:

ՀԱՅ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՄՆ

Յ Ե Դ Բ Գ Ո Պ Ա

(Տես յէջ 423)

Փ ՐԵԴԵՐԻԿ ՄԻՒԼԵՐ ծնած է յԵմնիկ Պոհեմիոյ (5 մարտ 1834): Ուսմանց սկզբնական ընթացքն ըրաւ նախ ի Զնայիմ Մորաւիոյ, ապա ի Վիէննա և ի Կէթթիսկէն, ցամա 1857: Հետեւեալ տարին Վիէննայի Համալսարանին Մատենադարանին մէջ պաշտօն վարելով, ապա արքունեաց Մատենադարանին վերատեսուչ անուանեցաւ. յետոյ վարդապետ և ուսուցիչ ի Համալսարանի: 1869ին իրեն յանձնուեցաւ համեմատական բանասիրութեան և սանսքրիտ լեզուի ուսուցչի աթոռը. ու կայսերական պիտութեանց ակադեմիայի անդամ: 1884ին աչէի հիւանդութեան պատճառաւ հրաժարեցաւ մատենադարանապետի պաշտօնմանէն, Կենսագրական այս մանրամասնութիւնները քաղած ենք Պրոքհաուսի և Մէյէրի բառարաններէն, ինչպէս ինքն Միւլլէր մեզի յանձնեց:

Բոլորովին բանասիրական և ազգախօսական ուսմանց տուաւ ինքզինքը Միւլլէր. և իր գլխաւոր գրուածքն է Ալկնարկ գիտութեան չեզոքի (Grundriss der Sprachwissenschaft) խորագիրը կրող երկասիրութիւնն, հսկայ երկ մը. յորում հեղինակն կու տայ մեզ քերականական համառոտութիւն և ընթերցման հասողածներ, ամէն ծանօթ լեզուաց: Այս գրուածքը կ'ամբողջացընէ ուրիշ երկասիրութեամբ մը, զոր կը կոչէ Ընդհանուր ազգագրութիւն (Allgemeine Ethnographie), որոյ առաջին տպագրութիւնն եղած է ի 1873